

ձան, բաւական թուով բրօնզեայ դաշոյներ, ա-
նօթներ և այլ նմոյնպէս և «Լայոյ Զոր» որտե-
ղից մեր ենթագորութեամբ, Աղէքսանդր Մակե-
դոնացին անցած լինելով, ամեն ազգի տարազի
զէնքերի, իրեղենների և դրամների առատ
աւար թողած պիտի լինի։ Վեց հատ դրամ
զրադաշտական, երեք հատ Արշակունեաց—
Պաշլաունի, երկու հատ հեթանոսական և
տասն հատ հին արարական քիւֆի տառերով,
բոլորն էլ արծաթ. նոյնպէս հետեւեալ պղնձի
դրամները. մի հատ անյայտ կուռքի պատկե-
րով, չորս հատ հին արարական ձկակիր, եր-
կուսն երկարաձեւ, վեց հատ թռչնակիր՝ սի-
րամարդ, բազ, ջալլամն, հնդկահաւ, կաքաւ,
մի հատ երկայնաձեւ՝ սրակիր, ութն հատ
կենդանակիր՝ փղի, ուղտի, բորենու, այծի,
ցլի, նապաստակի և եղջերուի նկարներով,
մէկ հատ աստղակիր՝ զուցէ՝ ասորական տա-
ռերով և մի հատ քիւֆի տառերով և կարի-
ծի նկարով։

4. Բրիտանական դարերից։

Մի հատ զրադէր մագաղաթեայ Մանր
ուսմունք՝ առանց յիշատակարանի. երկու
հատ արծաթի և երկու պղնձի դրամներ, ո-
րոնցից մէկը՝ Խաչակրաց ժամանակի մէկը
հռովմական, մէկը յունական, իսկ միւսը
հայկական՝ Հեթում թագաւորի ժամանակից։

Վերջացնում ենք երկտողս այն համաստ
կարծիքով, որ աւելորդ չէր լինի, եթէ Ս.
Էջմիածնի կողմից մի հնագէտի յանձնարար-
ուէր շրջակայքի հնութիւնները Ս. Էջմիած-
նի թանգարանի համար ժողովել, որոնցից
շատ շատերն, սեփական փորձերից զիտելք,
շատ շնչին դրամով կարելի է գնել իւր տե-
ղում, քանի՜ կը հասնէր Եւրոպական ճա-
նապարհորդ—հնագէտ և առաւել թանգվճա-
րով կը հաւաքէր մեր կողմերից հեռացնելու հա-
մար այն հնութիւններն, որոնք աւելի յար-
մար են իրենց տեղումն ուսու մնասիրելու հա-
մար։

Աղէքսանդր Տէր Սարգսեանց։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ.

Ներկայ յօդուածս առաջարկում եմ
հայ Օրացոյց կազմողների ուշադրութեան և
յուսով եմ որ իմ այս մի քանի նկատողու-
թիւններն առիթ կաան մտնադէտին աւելի
ևս քննել և լուսարանել այս հարցը Խօսքս
յատուկ անունների դրութեան մէջ պատա-
հող սխալների մասին է, որոնք ոչ թէ պատա-
հական կերպով, իրեւ տպագրութեան վրի-
պակ, աչքի են ընկնում այլ տարեյտարի մը-
նալով Օրացոյցներում այսօր այնքան են շա-
տացել և աղաւաղել ուղղագրութիւնը,
որ շատ անգամ մարդ հաւատալ չէ ուղում
թէ այս ինչ անունը յունական այն ինչ անունն
է համապատասխան։

Դժբաղդաբար այսպիսի կոպիտ սխալներ
որոնք մեզ ռուսահայերիս համար սովորա-
կան են դարձած, այսօր կրկնուում են և Ե-
րուսաղէմում տպագրուած Օրացոյցների մէջ,
ուր տպագրական գործին և լեզուի վերա-
բերեալ օրէնքներին կարծես թէ աւելի ու-
շադրութեամբ են վերաբերում։

Իհարկէ, ես այստեղ մի կողմն եմ թող-
նում յատուկ անունների այն ուղղագրու-
թիւնը, որը հեռանալով տրամալրիալիսնի
ընդհանուր կանոններից, կարելի է ասել, դա-
րերի ընթացքում քաղաքացիական իրաւունք
է ստացել, կամ որը ենթարկուելով լեզուի
որոշ հնչական կանոններին, փոխել է իւր
ուղղագրութիւնը. բայց ցաւ ի սիրտ պէտք
է ասել, որ այս սխալներն առաջ են եկած
լոկ աղիտութիւնից մի անգամ և հիմայ մենք
անտարբեր վերաբերուելով հարցին, այս մի
անգամ տրած սխալները կրկնում ենք և
կրկնում Օրինակ, մի անգամ ընդունուած է
զրել Դաւիթ և ոչ Դաւիդ, ինչպէս որ պէտք էր.
Թաթուլ և ոչ Թագուլ (Θεοδωλ), Նունէ և
ոչ Նիւնէ, Կոստանդիանոս և ոչ Կոնստանտի-
նոս Աթանաղիոնէ և ոչ Աթենոպոնէ, Բաղարատ
և ոչ Պաղարատ և ուրիշ, սրանք այսպէս էլ
պէտք է մնան. հարցն ուրեմն աղիտութիւնից
առաջ եկած սխալների մասին է, Ահուատիկ
այս սխալները, որ իմ կարծիքով պէտք է ուղ-
ղագրուին։

- ՅՈՒՆՈՒԱՐ. 21. Պօղոսոսի՝ փոխանակ Պոլեկոսոսի կամ Պոլեկոսոսի Այս անուան առաջին փանկը Պողոս անուան հետ կապ չունի:
27. Եւգենեոսի փոխ. Եւգենեոսի:
30. և Ելեմիուրոսի . . . փոխ. Ելեմեոսի . . .
- ՓԵՏՐՈՒԱՐ. 7. Յոնանու փոխ. Յոնանու կամ Յովնանու:
- ՅՈՒՆԻՍ 4. Բագոսի փոխ. Բակքոսի
30. Ընկրտոսի փոխ. Արիկիտեսի:
- ՕԳՈՍՏՈՍ 7. Պիատոսի փոխ. Պիատիսի: Սա մի կոպիտ սխալ է, քանի որ կանացի անուններն երբեք ու չեն կարող վերջաւորուիլ:
- ՍԵՊՏԵՄԲ. 22. Փիլիկոսիմոնի փոխ. Փիլիկոսիմոնի և Սիմէոնի Սիւնակեցւոյն փոխ. Սիմէոնի Սիւնակեցիի քանի որ ուղ. հոլ. սիւնակեաց է, ուրեմն սեռ. պէտք է լինի սիւնակեցի և ոչ սիւնակեցւոյն:
23. . . . կուսանացն Փեփրոնեայ փոխ. Փեփրոնեայ:
27. . . . և Ռամանոսի երգեցողին փոխ. Ռամանոսի կամ Հոռամանոսի:
29. Ղամբէոսի և Ղամբէուհայն = Eulampios և Eulampia. — Այս անունների և և փանկը շաղկապի (և) տեղ ընդունուելով հետզհետե վերացել է, և էն ինձ կարող են առարկել, որ Եւսերէոս անունը հայերը Սերէոս էլ են գործածում սակայն այսպիսի կրճատումներ կարող են միայն գործածական բառերի մէջ լինել, և ոչ թէ այս երկու սակաւ գործածական անունների մէջ: Յամանայն գէպս գուցէ Ղամբէոսը հայկական է, բայց պէտք է գրել Ղամպէոս:
30. Եւստամէոսի և Էստոն նորա Թէոփիսոսի և կուսանացն Երմանեայ և Նեքտատինեայ. պէտք է լինի Թէոփիսոսի (դարձեալ կանացի անուն ու վերջաւորութեամբ), Երմանեայ և Նեկտատինեայ:
- ՀԱԿՏԵՄԲ. 7. Պեղիգիայ փոխ. Պեղագիայ
9. Պանդակոնի փոխ. Պանդակոնի:
14. . . . և Սիւլիանոսի փոխ. Սիւլուանոսի:
21. . . . և Ռամելայ փոխ. Ռամելայ կամ Հոռամելայ:
- ՆՈՅԵՄԲ. 10. . . . Բուրայ փոխ. Բուրայ:
25. . . . Տարագրոսի երեխ. Տարաքոսի, Պրոպոսի փոխ. Պրոքոսի:
29. . . . և Բարգուլիմէոսի փոխ. Բարթուղիմէոսի:
- ԴԵԿՏԵՄԲ. 8. . . . և Գրարոսի փոխ. և Եւգրափոսի Այստեղ ևս և փանկը ընդունուած է շաղկապի տեղ. ուրեմն պէտք է լինի Եւգրափոս — Eugraphus:
11. Օգսէնտիոսի փոխ. Օքսէնտիոսի:
16. Եւտիգի փոխ. Եւտիգի:
18. . . . Սրբոց կուսանացն Ինգոսի, Դոմնայի և Գլերիկոսի քահանային:

Ահա մի մեծ սխալ. Ինգոսը (այն էլ Ինգիսը) եղել է ներքինի, ինչպէս երևում է վարք սրբոցից, բայց օրացոյցի մէջ դուրս է դալիս, որ կոչւ է. Աւրեմն ի՛նչ մեղաւոր էր Մ. . . քահանան, որը նորերս մեր քաղաքում մկրտեց Խ. . . ի աղջիկը և անունը դրինք Ինգոս:

Ինչ կլերարերի Գլերիկոս քահանային, սա Գլերիկոսն է:

Գուցէ բացի այս սխալներից ուրիշներն էլ կան, թող հետաքրքրուողը գտնէ. նոյնպէս եթէ իմ այս գրութեան մէջ թիւրիմացութիւններ կան պարզէ՛ք:

Սահակ Թանդեան:

Ն. Նախիջնան
5 Ապրիլ:

* Յարգելի յօդուածագրի դիտողութիւնները վերաբերում են առաւել Տօնացոցի ուղղագրութեան. քան թէ Օրացոյցներ կազմողներին. որոնք այդ անունները պարտական են տօնացոցի համաձայն գրել. ուր այդ սխալները շատ հին են. ինչպէս առնաստիճան յոնական շատ անունների հայերէն տառադարձութիւնները: Տօնացոցի այդ սխալներն այն քան հին են, որ մինչեւ իսկ շարականների մէջ են սարդել, օրինակ՝ Գրափոս է գրած շարականի մէջ, որ պէտք է Եւգրափոս լինէր: Տօնացոցի մի նոր քահանայական եղանակով պատրաստուած հրատարակութեան մէջ կարելի կլինի ուղղագրել այդ օրինակ շատ սխալներ:

Օ. Խմբ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԵԱԿԱՆ.	
1. Յարուցեալ Յարուցիլը . . . Կ. Վ. . .	155
2. Քրիստոնէական տոների սկիզբը եւ պատճառները . . . Կ. Վ. . .	167
5. Եւս միլիոն Հոլիերացիների ուղեծրը Հայոց օգտին . . . Թարգ. Գ. Ս. . .	151
4. Եւս Եւսեւս Երմանայ	155
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԵՏՐՈՒԱԿԱՆ.	
5. Պարթևները Պարսկաստանում . . . Ն. Բ. . .	157
6. Նիւթեր Աղուանից պատմութեան ուսումնասիրութեան համար . . . Ն. Վ. . .	161
7. 26 Ապրիլ . . . 8. Յովնանիսեան . . .	165
ՄԱՆԱԿԱՆԱԿԱՆ—ԲԱՆԱԿԱՆԱԿԱՆ.	
8. Հայոց գրականութիւնը պարտական է մտնել Հայ մայրերին եւ զաւակներին. Ս. Մ. . .	164
9. Ինքնակրթութեան գործը Ամբիկայում Ս. Սմայլ . . .	169
10. ՄԱՆԱԿԱՆԱԿԱՆ . . .	172
ԱԶԳԱՅԻՆ.	
11. Եւսեւսի հոլիութիւն	175
12. Եւսեւսի ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ	174
ՌՈՒՄԱՆԱԿԱՆ.	
ՏԱՇԿԱՆԱԿԱՆ.	
ՊԵՏՐՈՒԱԿԱՆ.	
ՆԱԿԱՆ Խմբագրութեան.	
ՐՈՒՄԱՆԱԿԱՆԱԿԱՆ.	
ՅԱՆՈՒՆԱԿԱՆ. Գրիգոր Խալիպի. Գ. Խալիպի.	
ԺԱՆՈՒՆԱԿԱՆ.	
ՅԱՅԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.	